

## **Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը հանդիպեց Գավառի պոլիկլինիկայի բուժանձնակազմին**

22.06.2017

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը հունիսի 22-ին այցելեց Գավառի պոլիկլինիկայի բուժանձնակազմին: Նրան ուղեկցում էին Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Արտաշես Նիկոյանը եւ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանը: Բուժաշխատողի օրվա առթիվ մարզպետը շնորհավորեց Գավառի պոլիկլինիկայի բուժանձնակազմին՝ մաղթելով նրանց աշխատանքային ու անձնական հաջողություններ: «Մեծ է ձեր դերը մեր հանրության առողջ ապրելակերպն ապահովելու գործում: Ձեզանից խնդրում ու պահանջում եմ մասնագիտական մոտեցում ու մարդկային վերաբերմունք: Համոզված եմ, որ դուք հիմնականում պահպանում եք հիպոկրատի երդումը և խղճի մտքը եք իրականացնում մեր քաղաքացիների բուժապասարկումը: Համոզված եղեք, որ մենք միշտ կլինենք աշխատող մարդկանց կողքին՝ ըստ արժանվույն գնահատելով նրանց վաստակը»,-նշեց մարզպետ Կարեն Բոթոյանը: Գավառի պոլիկլինիկայի տնօրեն Արտակ Եղոյանը եւ բուժանձնակազմի անդամներն իրենց հերթին հավաստիացրին, որ կանեն հնարավորը՝ բնակչության բուժապասարկման որակը բարելավելու եւ ավելի բարձր հիմքի վրա դնելու համար: